

Մասնագիտական գրականության մեջ սեփականության կառավարման արդյունավետության բնորոշման եւ, առավել եւս, դրա գնահատման մեթոդաբանական հարցերում միասնական տեսակետ գոյություն չունի: Սեփականության կառավարման արդյունավետության հարցերը, որպես օրինաչափություն, առավել լայն քննարկման առարկա են դարձել «մենեջմենթ» ամսարկայի շրջանակներում, այսինքն՝ հիմնականում որպես միկրոմակարդակի հիմնախնդիրներ: Առավել սակավ են կառավարման մակրոմակարդակին, օրինակ՝ պետական կառավարման արդյունավետության առնչվող հետազոտությունները: Սակայն, ընդհանուր առմամբ, երկու մոտեցումներում էլ առանցքային հարցերի շրջանակներն ընդհանուր եզրեր շատ ունեն, եթե չասենք՝ նույնական են: Օրինակ՝ որոշ տնտեսագետներ սեփականության կառավարման արդյունավետությունը կապում են կառավարող համակարգի արդյունքների եւ ծախսերի հետ, մյուսներն այն դիտարկում են որպես կազմակերպչական միջոցառումների արդյունավետություն: Առավել հաճախ կարծիք է հայտնվում, ըստ որի՝ սեփականության կառավարման արդյունավետությունը գնահատվում է կառավարման նպատակներին հասնելու աստիճանով, ընդ որում այս ուղղության շատ հեղինակներ տարբերվում են կառավարման նպատակի բովանդակության մեկնաբանման տեսակետներով: Այլ կարծիքներ եւս կան այս ուղղությամբ: Բոլոր դեպքերում ճիշտ է այն տեսակետը, որ սեփականության կառավարման արդյունավետության բովանդակության հարցում տեսակետների հակասականությունը պայմանավորվում է հետազոտվող հարցի նկատմամբ համակարգային մոտեցման բացակայությամբ:

Առավել նեղ իմաստով համակարգի արդյունավետությունը բնութագրում է համակարգի ծախսերի եւ գործունեության արդյունքների հարաբերությունը: Կախված այն բանից, թե ինչպիսի ծախսեր են հատկապես ինչպիսի արդյունքներ են ուշադրության արժանաւում, կարելի է խոսել տնտեսական, սոցիալ-տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, քննադատական արդյունավետության մասին*։ Պետական սեփականության կառավարման արդյունավետությունը՝ որպես կառավարող համակարգի բնութագիր, լայն իմաստով, պետական սեփականության կառավարման նպատակահարմարությունն է եւ որակը՝ ուղղված կառավարվող համակարգի գործունեության լավագույն արդյունքների ստացմանը, դրա նպատակների եւ ռազմավարության իրագործմանը, որակական եւ քանակական որոշակի արդյունքներին հասնելուն:

Ստորեւ փորձել ենք մշակել պետական հատվածի արդյունավետության ընդհանրական գնահատական եւ դրա հիման վրա կառուցել պետական հատվածի արդյունավետ կառուցվածքի ձեւավորման տնտեսամաթեմատիկական մոդել:

Պետական հատվածը դիտարկվում է որպես «պետական կառավարում» եւ «պետական ընկերություններ» ենթահատվածների ամբողջություն: Ենթադրվում է, որ «պետական կառավարում» ենթահատվածում առկա են $i=1,2,\dots,m$, իսկ «պետական ընկերություններ» ենթահատվածում՝ $j=1,2,\dots,n$ ոլորտներ: Մոդելի մշակման հիմնական խնդիրը այս ոլորտների արդյունավետ կառուց-

վածքի ստացման տնտեսամաթեմատիկական ընթացակարգերի հստակեցումն է:

Մոդելի կառուցման նպատակով անենք հետեւյալ ելակետային նշանակումները: Այսպես, W_i եւ W_j -ով նշանակենք համապատասխանաբար i -րդ եւ j -րդ ոլորտի պետական հատվածներում զբաղվածների տեսակարար կշիռը նույն ոլորտում զբաղվածների ընդհանուր թվում: Այսինքն՝

$$W_{Li} = \frac{L_i^s}{L_i^s + L_i^p}, \quad i = \overline{1, m} \quad (1),$$

$$W_{Lj} = \frac{L_j^s}{L_j^s + L_j^p}, \quad j = \overline{1, n} \quad (2),$$

որտեղ՝

L^s եւ L^p -ն տվյալ ոլորտի պետական հատվածում զբաղվածների թիվն է,

L^p եւ L^p -ն տվյալ ոլորտի մասնավոր հատվածում զբաղվածների թիվն է:

W_{VAi} եւ W_{VAj} -ով նշանակենք համապատասխանաբար i -րդ եւ j -րդ ոլորտի պետական հատվածներում ստեղծված ավելացված արժեքի տեսակարար կշիռը նույն ոլորտում ստեղծված ընդհանուր ավելացված արժեքում: Դրանց հաշվարկման բանաձեւերը կունենան հետեւյալ տեսքը.

$$W_{VAi} = \frac{VA_i^s}{VA_i^s + VA_i^p}, \quad i = \overline{1, m} \quad (3)$$

$$W_{VAj} = \frac{VA_j^s}{VA_j^s + VA_j^p}, \quad j = \overline{1, n} \quad (4),$$

որտեղ՝

VA^s եւ VA^p -ն համապատասխանաբար i -րդ եւ j -րդ ոլորտի պետական հատվածում ստեղծված ավելացված արժեքի մեծությունն է, VA^p եւ VA^p -ն համապատասխանաբար i -րդ եւ j -րդ ոլորտի մասնավոր հատվածում ստեղծված ավելացված արժեքի մեծությունն է:

Մոդելում օգտագործելու ենք ներկայացված (1)-(4) ցուցանիշների միջինները.

$$\overline{W}_i = \frac{W_{Li} + W_{VAi}}{2}, \quad i = \overline{1, m} \quad (5),$$

$$\overline{W}_j = \frac{W_{Lj} + W_{VAj}}{2}, \quad j = \overline{1, n} \quad (6):$$

EF^s եւ EF^p -ով նշանակենք համապատասխանաբար i -րդ եւ j -րդ ոլորտի պետական հատվածների արդյունավետությունը՝ որպես այդպիսին հասկանալով դիտարկվող ոլորտներում ստեղծված ավելացված արժեքի եւ շահատանքային ու կոլթական ծախսումների հարաբերակցությունը: Բանաձեւային տեսքով այս մեծությունները կարելի է արտահայտել հետեւյալ կերպ.

$$EF_i^s = \frac{VA_i^s}{LC_i^s + MC_i^s + ITC_i^s}, \quad i = \overline{1, m} \quad (7),$$

$$EF_j^p = \frac{VA_j^p}{LC_j^p + MC_j^p + ITC_j^p}, \quad j = \overline{1, n} \quad (8),$$

որտեղ՝

LC^s եւ LC^p -ն i եւ j ոլորտների պետական հատվածներում աշխատանքային ծախսումների մեծությունն է,

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

Սամսոն
ԴԱՎՈՅԱՆ
ՀՊՏՀ
Գյումրու
մասնաճյուղի
տնօրեն,
տնտեսագիտության
դոկտոր,
պրոֆեսոր



MC^s եւ MC^p -ն i եւ j ոլորտների պետական հատվածներում կյուբական ծախսումների մեծությունն է, ITC^s եւ ITC^p -ն i եւ j ոլորտների պետական հատվածներում ոչ կյուբական ծախսումների մեծությունն է:

Այս նշանակումների դեպքում պետական հատվածի արդյունավետության ինտեգրալային ցուցանիշը կարելի է ներկայացնել դիտարկվող ոլորտների արդյունավետության եւ դրանց համապատասխան կշիռների արտադրյալի հանրագումարի տեսքով.

$$EFS = EFS_G + EFS_C \quad (9),$$

$$EFS_G = \sum_{i=1}^m \bar{W}_i EF_i^s \quad (10),$$

$$EFS_C = \sum_{j=1}^n \bar{W}_j EF_j^p \quad (11),$$

որտեղ՝

EFS -ն պետական հատվածի արդյունավետության ինտեգրալային ցուցանիշն է,

EFS_G -ն «պետական կառավարում» ենթահատվածի արդյունավետության ցուցանիշն է,

EFS_C -ն «պետական ընկերություններ» ենթահատվածի արդյունավետության ցուցանիշն է:

Պետական հատվածի ներսում ոլորտների կշիռները պետք է ընտրել այնպես, որ (9)-(11) բանաձեւերով որոշվող ինտեգրալային արդյունավետության ցուցանիշը ընդունի առավելագույն արժեքը.

$$\sum_{i=1}^m \bar{W}_i EF_i^s + \sum_{j=1}^n \bar{W}_j EF_j^p \rightarrow \max \quad (12),$$

հետեւյալ սահմանափակումների դեպքում՝

$$\sum_{i=1}^m W_{Li} + \sum_{j=1}^n W_{Lj} < 1 \quad (13),$$

$$\sum_{i=1}^m W_{VAi} + \sum_{j=1}^n W_{VAj} < 1 \quad (14),$$

$$\bar{W}_i \geq 0, \quad i = \overline{1, m} \quad (15),$$

$$\bar{W}_j \geq 0, \quad j = \overline{1, n} \quad (16):$$

Պետական հատվածի արդյունավետության ապահովման խնդրի լուծումը մեծապես պայմանավորված է պետական եւ մասնավոր հատվածների արդյունավետության միջեւ համապատասխանության ապահովման հանգամանքով: Մեր կարծիքով՝ արդյունավետ կարելի է համարել տնտեսության այնպիսի կառուցվածքը, որի դեպքում թե՛ մասնավոր, թե՛ պետական հատվածներում ներգրավված ռեսուրսներն օգտագործվում են առավել արդյունավետ: Այսինքն՝ եթե շուկայական տնտեսության պայմաններում գործում է տնտեսության տարբեր հատվածների միջեւ ռեսուրսների ազատ տեղաշարժման սկզբունքը, ապա կարելի է համարել, որ մասնավոր եւ պետական հատվածների արդյունավետության մասնակի ցուցանիշների միջեւ շեղումը պետք է լինի նվազագույն:

Իդեալական տարբերակում պետական եւ մասնավոր հատվածներում արդյունավետության ցուցանիշները կամայական q ոլորտում պետք է հավասար լինեն (այն ոլորտներում, որտեղ գործում է պետական հատվածի մենաշնորհային իրավունքը, մասնավոր հատվածի արդյունավետությունը պայմանական է).

$$EF_i^s = EF_j^p \quad (17),$$

որտեղ EF_i^s q -րդ ոլորտում պետական հատվածի արդյունավետությունն է:

Բնականաբար՝ (17) հավասարությունը կարող է տեղի ունենալ

միայն շատ բացառիկ դեպքերում, ավելի ընդհանուր դեպքում պետք է աշխատել ոչ թե պետական եւ մասնավոր հատվածների արդյունավետության ցուցանիշները հավասարեցնել, այլ մասնավոր հատվածի արդյունավետության գնահատականների հիման վրա դուրս բերել նորմատիվային ցուցանիշներ, որոնք ուղենիշային պետք է հանդիսանան տարբեր ոլորտների պետական հատվածների համար:

Արդյունավետության նորմատիվային ցուցանիշները կարելի է ներկայացնել հետեւյալ կերպ.

$$N_i = \alpha_i EF_i^p, \quad i = \overline{1, m} \quad (18),$$

$$N_j = \alpha_j EF_j^s, \quad j = \overline{1, n} \quad (19),$$

որտեղ՝

$$EF_i^p = \frac{VA_i^p}{LC_i^p + MC_i^p + ITC_i^p} \quad (20),$$

$$EF_j^s = \frac{VA_j^s}{LC_j^s + MC_j^s + ITC_j^s} \quad (21),$$

որտեղ՝ LC^p եւ LC^s -ն i եւ j ոլորտների մասնավոր հատվածներում աշխատանքային ծախսումների մեծությունն է,

MC^p եւ MC^s -ն i եւ j ոլորտների մասնավոր հատվածներում կյուբական ծախսումների մեծությունն է,

ITC^p եւ ITC^s -ն i եւ j ոլորտների մասնավոր հատվածներում ոչ կյուբական ծախսումների մեծությունն է,

α -ն արդյունավետության համապատասխանության նորմատիվ գործակիցն է, ընդ որում՝

$$\alpha_0 < \alpha \leq 1,$$

որտեղ α_0 -ն արդյունավետության համապատասխանության ստորին սահմանն է:

Հարկ է նշել, որ α եւ α_0 գործակիցները որոշվում են փորձագիտական եղանակով՝ ելնելով պետական սեփականության կառավարման ռազմավարության գերակայություններից:

Այս խնդրադրումների շրջանակներում պետական սեփականության կառավարման արդյունավետության ապահովման կարելի է խնդիրներից մեկը պետք է հանդիսանա (18)-(21) բանաձեւերով որոշվող նորմատիվների կատարման ապահովումը, այսինքն՝ դրանց ու պետական հատվածում արդյունավետության մասնակի ցուցանիշների միջեւ հնարավոր շեղումների նվազեցումը:

Նորմատիվային ցուցանիշներից արդյունավետության մասնակի ցուցանիշների շեղումները կարելի է գնահատել հետեւյալ կերպ.

$$DIS_G = \sqrt{\sum_{i=1}^m \bar{W}_i (EF_i^s - N_i)^2} \quad (22),$$

$$DIS_C = \sqrt{\sum_{j=1}^n \bar{W}_j (EF_j^p - N_j)^2} \quad (23),$$

$$DIS = \sqrt{DIS_G^2 + DIS_C^2} \quad (24),$$

որտեղ՝

DIS -ն նորմատիվային պարամետրերից պետական հատվածի արդյունավետության մակարդակի շեղման ընդհանրական գնահատականն է,

DIS_G -ն «պետական կառավարում» ենթահատվածի արդյունավետության նորմատիվային եւ փաստացի ցուցանիշների շեղումն է, DIS_C -ն «պետական ընկերություններ» ենթահատվածի արդյունավետության նորմատիվային եւ փաստացի ցուցանիշների շեղումն է:

Ըստ այդմ՝ խնդիր է դրվում ընտրել պետական հատվածի այնպիսի կառուցվածք, որի դեպքում ապահովվում է արդյունավետության փաստացի եւ նորմատիվային ցուցանիշների միջեւ

Արմեն ԲԹՈՅԱՆ
 ՀՊՏՀ
 Գյումրու
 մասնաճյուղի
 դասախոս,
 տնտեսագիտության
 թեկնածու



սվազագույն շեղումը.

$$\sqrt{\sum_{i=1}^m \bar{W}_i (EF_i^s - N_i)^2} + \sqrt{\sum_{j=1}^m \bar{W}_j (EF_j^s - N_j)^2} \rightarrow \min \quad (25)$$

(13)-(16) սահմանափակումների դեպքում:

Առավել ընդհանուր դեպքում պետական սեփականության օպտիմալ կառուցվածքի ձեւավորման խնդիրների համակարգը կունենա հետևյալ տեսքը.

$$\sum_{i=1}^m \bar{W}_i \frac{VA_i^s}{LC_i^s + MC_i^s + ITC_i^s} + \sum_{j=1}^m \bar{W}_j \frac{VA_j^s}{LC_j^s + MC_j^s + ITC_j^s} \rightarrow \max \quad (26),$$

$$\sqrt{\sum_{i=1}^4 \bar{W}_i \left(\frac{VA_i^s}{LC_i^s + MC_i^s + ITC_i^s} - \alpha_i \frac{VA_i^p}{LC_i^p + MC_i^p + ITC_i^p} \right)^2} + \sqrt{\sum_{j=1}^6 \bar{W}_j \left(\frac{VA_j^s}{LC_j^s + MC_j^s + ITC_j^s} - \alpha_j \frac{VA_j^p}{LC_j^p + MC_j^p + ITC_j^p} \right)^2} \rightarrow \min \quad (27),$$

$$\bar{W}_i = \frac{W_{Li} + W_{VAi}}{2}, \quad i = \overline{1, n} \quad (28),$$

$$\bar{W}_j = \frac{W_{Lj} + W_{VAj}}{2}, \quad j = \overline{1, m} \quad (29),$$

$$W_{VAi} = \frac{VA_i^s}{VA_i^s + VA_i^p}, \quad i = \overline{1, n} \quad (30),$$

$$W_{VAj} = \frac{VA_j^s}{VA_j^s + VA_j^p}, \quad j = \overline{1, m} \quad (31),$$

$$\sum_{i=1}^4 W_{Li} + \sum_{j=1}^6 W_{Lj} < 1 \quad (32),$$

$$\sum_{i=1}^4 W_{VAi} + \sum_{j=1}^6 W_{VAj} < 1 \quad (33),$$

$$\bar{W}_i \geq 0, \quad i = \overline{1, n} \quad (34),$$

$$\bar{W}_j \geq 0, \quad j = \overline{1, m} \quad (35):$$

Սկարագրված խնդիրը կարելի է լուծել մի քանի փուլով: Այսպես, առաջին փուլում որպես փոփոխականներ կարելի է դիտարկել «պետական կառավարում» եւ «պետական ընկերություններ» ենթահատվածների տեսակարար կշիռները պետական սեփականության կառուցվածքում: Երկրորդ փուլում այս ենթահատվածներից յուրաքանչյուրի համար կարելի է կառուցել (26)-(35) համակարգը որպես փոփոխական ընդունելով դրանց բաղադրիչների տեսակարար կշիռները: Երրորդ փուլում էլ միացնելով նախորդ երկու փուլերում ստացված արդյունքները՝ կարող ենք դուրս բերել պետական հատվածի արդյունավետ կառուցվածքի գնահատականը:

Հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման կարելիոր նախապայմաններից է հանրային եւ դրա տնտեսական կառուցվածքի արդյունավետ կազմակերպմանը բարձր մակարդակ հաղորդող տնտեսական շահերի շարժունակությունը, տնտեսավարող սուբյեկտների փոխգործակցությունը, ինչն իր հերթին տնտեսական ցանկացած համակարգում սերտ կապված է ինչպես սեփականության հարաբերությունների փոփոխության հետ, որն արդյունքում տնտեսության մեջ կառուցվածքային տեղաշարժերի է հանգեցնում՝ լուծելով տնտեսական հարաբերությունների համակարգում հասունացած հակասությունները, այնպես էլ անմիջականորեն պայմանավորում է տնտեսական ամբողջ համակարգի, դրա կառուցվածքի փոփոխությունը: Այս փոխկապվածության բացակայությունը տնտեսության մեջ բացասական այնպիսի երեւոյթների ծագման եւ զարգացման պատճառ է, ինչպես մրցակցության ցածր մակարդակը, հեռանկարային որոշումների կենսագործման անարդյունավետությունը, ճգնաժամային երեւոյթները: Նմանատիպ ձեւախեղումների հաղթահարումը կարող է իրականացվել տնտեսական հարաբերությունների սուբյեկտների շահերի փոփոխամածայնեցման, սեփականության ձեւերի փոփոխության եւ հասարակական վերարտադրության մեջ կառուցվածքային համարժեք վերափոխումներին համապատասխան դրանց շարժունակության պարագայում:

Պահանջմունքների կառուցվածքում փոփոխությունները եւ տնտեսական շահերի համապատասխան շարժընթացը հանգեցնում են կառուցվածքային տեղաշարժերի, սակայն չեն կարող դիտարկվել որպես դրանց համար բավարար պայման: Տնտեսական պահանջմունքների ու տնտեսական շահերի քանակական եւ որակական ծավալը պայմանավորված է տնտեսական հարաբերությունների վիճակով, գիտության եւ տեխնիկայի զարգացման մակարդակով: Տնտեսության մեջ կառուցվածքային տեղաշարժերի եւս մեկ պատճառ են տնտեսական միավորների տիրապետության տակ գտնվող ռեսուրսները եւ դրանց օգտագործման հնարավորությունները: Ռեսուրսների սահմանափակությունը եւ դրանց արդյունահանման աճող դժվարությունները եւս հարկադրում են իրականացնել կառուցվածքային վերափոխումներ:

Վերը նշվածից եւ կառուցվածքային տեղաշարժերի բովանդակությունից բխում է, որ դրանց հիմնական պատճառը հասարակական պահանջմունքների եւ տնտեսական շահերի համակարգի զարգացումն է: Պահանջմունքների կառուցվածքում փոփոխությունները եւ տնտեսական շահերի համակարգի շարժընթացը, սպառման եւ համապատասխանաբար՝ նաեւ արտադրության կառուցվածքում տեղաշարժերի անհրաժեշտությունն են ստեղծում:

Տնտեսական որոշակի համակարգի շրջանակներում կառուցվածքային տեղաշարժերը պայմանավորված են նաեւ արտաքին միջավայրը կազմող համակարգերի տեղաշարժերի առնչությամբ առկա հակասություններով: Այսպես, անհատի պահանջմունքների եւ շահերի կառուցվածքում տեղաշարժը (այսինքն՝ կառուցվածքային տեղաշարժը նաևումակարգակում) հակասության մեջ է մտնում իր՝ որպես որոշակի կազմակերպության աշխատանքային կոլեկտիվի ներկայացուցչի եկամուտների կառուցվածքում (այսինքն՝ միկրոմակարգակում) տեղի ունեցած տեղաշարժի հետ, որն իր հերթին արտացոլում է տեղաշարժերը մրցակցության, աշխատանքի հասարակական արտադրողականության, աշխատուժի եւ այլնի կառուցվածքում (այսինքն՝ մեզո եւ մակրոմակարգակներում):

Ժամանակակից տնտեսության պայմաններում, երբ տնտեսական համակարգի զարգացման գերակա ուղղություններ են պարբերաբար ծագող ճգնաժամների հաղթահարումը, արտադրության եւ դրա եկթակառուցների օպտիմալ բաշխումը, համակարգի գործարկման կայունության ապահովումը, հույժ կարեւոր նշանակություն են ստանում շուկայական պայմաններում կառուցվածքային տեղաշարժերի առանձնահատկությունների, դրանց հիմքում ընկած գործոնների համակողմանի վերլուծությունները: Այս տեսանկյունից գերակա խնդիր են դառնում տնտեսության մեջ կառուցվածքային տեղաշարժերի համակողմանի վերլուծության մեթոդական գործիքակազմի մշակումն ու արդյունավետ կիրառումը, եւ այս ուղղությամբ առաջին քայլը պետք է լինի կառուցվածքային տեղաշարժերի քանակական բնութագրիչների սահմանումը, որոնց գնահատումը թույլ կտա առավել ճշգրիտ պատկերացում կազմել տնտեսության մեջ տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերի ուղղվածության, ընդգրկման շրջանակների եւ խորության մասին:

Տնտեսության մեջ կառուցվածքային տեղաշարժերի քանակական բնութագրիչների հետազոտման հիմնական նախադրյալ է

* Д.ж.К. Лафта, Эффективность менеджмента организации, М.: Русская деловая литература, 1999.